**Հավելված 1**

**ՀՀ ԱԺ նախագահի 2019թ. մայիսի 13-ի թիվ ՆՈ-05-Լ որոշման**

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**
**«Անցումային արդարադատության գործիքների կիրառման հեռանկարները Հայաստանում» թեմայով լսումների**

**Օրը**՝ 24 մայիսի 2019թ
**Վայրը**՝ ՀՀ ԱԺ նիստերի դահլիճ (առավելագույնը 150 նստատեղ)
**Տևողությունը**՝ 10:00-16:00 (13:00-14:00 ընդմիջում)

Լսումներին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել մինչև ամսի 22-ը՝ ժամը 18:00-ն՝ նամակ ուղարկելով shushanna.tevanyan@parliament.am էլեկտրոնային հասցեին:

Լսումների ընթացքում կնախատեսվեն առնվազն երեք բանախոսի զեկույց՝ 20-ական րոպե տևողությամբ, որոնց կհաջորդեն 20-ական րոպե տևողությամբ հարցուպատասխանի սեսիաները: Նախնական պատկերացմամբ բանախոսների զեկույցների շրջանակներում կշոշափվեն անցումային արդարադատության թեմայով միջազգային փորձին, դրա առանձին գործիքների կիրառման հեռանկարներին, ինչպես նաև գործընթացի կազմակերպման հնարավոր տարբերակներին վերաբերող հարցեր:

Հարցուպատասխանի յուրաքանչյուր սեսիայի ընթացքում որոշակի ժամանակահատված կհատկացվի Ֆեյսբուք սոցիալական ցանցով ստեղծված լսումների միջոցառման (Facebook event) շրջանակներում ուղարկված հարցերին բանախոսների կողմից պատասխանելու համար: Ֆեյսբուքյան քննարկումը կվարի համապատասխան մասնագետը:

Լսումների մեկնարկին բացման խոսքով հանդես կգա Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը:

Լսումների ընթացքում նախատեսվում են նաև միջազգային հրավիրյալ փորձագետների ելույթներ անցումային արդարադատությանն առնչվող առանձին հարցերի վերաբերյալ:

Վերջին մեկ ու կես ժամը կհատկացվի ելույթներին, որոնց համար հերթագրման գործընթացը կտևի լսումների սկզբից մինչև ճաշի ընդմիջման ավարտը: Կախված ելույթների համար հերթագրված անձանց թվից և նկատի ունենալով ելույթների համար սահմանված իննսուն րոպեանոց ժամանակահատվածը՝ լսումների վարողի կողմից կսահմանվի ելույթների հնարավոր օպտիմալ ժամանակահատվածը:

Կնախատեսվի լսումների ամփոփիչ հակիրճ եզրափակիչ ելույթ Ազգային ժողովի նախագահի կողմից:

Լսումների ընթացքում կապահովվի հայերեն-անգլերեն երկկողմանի համաժամանակյա թարգմանություն:

Լսումների վերջնականացված օրակարգը լսումներից առնվազն երեք օր առաջ կտեղադրվի Ազգային ժողովի կայքում:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Տ. ԳԱԼՍՏՅԱՆ